ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1594 23.10.2015թ

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը հոկտեմբեր ամսին այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Մուշի ՁՊՎ և արձանագրվել են խախտումներ:

1. Սերյոժա Սամվելի Վանեսյանը անհասկանալի պատճառներով 14.06.2015թ-ին ժամը 00.05-ին ՀՀ Շիրակի ՄՎ Գյումրու քննչական կոմիտեից Մուշի բաժնի ՁՊՎ բերման է ենթարկվել, արդեն իսկ, ինչպես վերարտակավորել է քննիչը, կալանավորվածի կարգավիճակում:

   - Քննչական կոմիտեի և Մուշի բաժնի շենքերը կողք կողքի են, բայց նշված անձը ՁՊՎ մուտք է գործել 50 րոպե անց:
   - Ս. Վանեսյանը եղել է հետախուզվող և կալանավորվածի կարգավիճակ չի ունեցել և նա պետք է որպես ձերբակալված ընդունվեր ՁՊՎ:
   - Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է նաև, որ Ս. Վանեսյանը մուտք է գործել ՀՀ՝ 03.06.2015թ-ին Զվարթնոց օդանավակայանով, եղել է հետախուզվող, բերման չի ենթարկվել և նրա նկատմամբ ոչ մի միջոցառում չի ձեռնարկվել, ինչպես նշում է Մուշի բաժնի հերթապահ մասի պետը, Ս. Վանեսյանը նույն օրը ինքնակամ ներկայացել է քննչական բաժին:

2. ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Մուշի ՁՊՎ հետախուզման մեջ գտնվող անձիք ընդունվում են ոչ թե որպես ձերբակալված, ինչպես նախատեսում է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0197/06/08 նախադեպային որոշումը և ՀՀ քր. դատ. օր-ի 259 հոդվածի 3-րդ կետը, այլ ընդունվում են որպես կալանավոր՝ հիմք ընդունելով տարիներ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՐԹ № 5099
26 10 2015 թ.
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՏՐԹ թիվ 7272
26 10 2015 թ.

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս՝ (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

առաջ դատարանի կողմից խափանման միջոց կալանքը ընտրելու որոշումները: Նշվածի վառ ապացույց է հանդիսանում տվյալ անձանց մուտքը ՀՊՎ.

Սամվել Սերյոժայի Վանեսյան՝ մուտք է գործել ՀՊՎ 04.06.2015թ-ին ժամը 00.55-ին, Արտյոմ Ռուբիկի Պետրոսյան՝ մուտք է գործել ՀՊՎ 15.07.2015թ-ին ժամը 21.00-ին, Ռաֆիկ Սուրիկի Սարգսյան՝ մուտք է գործել ՀՊՎ՝ 13.10.2015թ-ին ժամը 06.55-ին:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-3992 «26» 11 2015թ.

Ձեր 23.10.2015թ. թիվ 2621/1594 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Մուշի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Շիրակի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

Հետախուզվող Ս. Վանեսյանը 03.06.2015թ ինքնակամ ներկայացել է ոստիկանության ծառայողներին և նույն օրը ժամը 21.30-ին <<Զվարթնոց>> օդանավակայանից վերջիններիս ուղեկցությամբ տեղափոխվել է ՀՀ ՔԿ Շիրակի մարզային քննչական վարչություն, որտեղ ժամը 23.10-ին քննիչը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ս. Վանեսյանի նկատմամբ հայտարարված է եղել հետախուզում և խափանման միջոցը ընտրված է եղել կալանքը, որոշում է կայացրել Ս. Վանեսյանին որպես կալանավոր ոստիկանության Մուշի բաժնի ՁՊՎ ընդունելու մասին: Ս. Վանեսյանը 04.06.2015թ-ին ժամը 00.05-ին տեղափոխվել է ոստիկանության Մուշի բաժին, որտեղ կազմվել է նրա անձնական գործը և ՁՊՎ վարչակազմը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 7-րդ կետի պահանջներով՝ ժամը 00.55-ին Ս. Վանեսյանին ընդունել է ՁՊՎ:

Ինչ վերաբերվում է Ս. Վանեսյանին Շիրակի մարզային քննչական վարչությունից ոստիկանության Մուշի բաժին բերման ենթարկելու մասին արձանագրություն կազմելուն, ապա

դրա անհրաժեշտությունը չի եղել, քանի որ Ս. Վանեսյանը քննիչի որոշման համաձայն եղել է կալանավորված անձ, սակայն այդ հանգամանքով Ս. Վանեսյանի իրավունքները չեն խախտվել: Ոստիկանության Մուշի բաժնի ծառայողները նախազգուշացվել են՝այսուհետ նմանատիպ դեպքերում ղեկավարվել ՀՀ քր. դատ. օր-ի 259-րդ հոդվածի պահանջներով:

Հետախուզվող Ա. Պետրոսյանը 15.07.2015թ. բերման է ենթարկվել ոստիկանության Մուշի բաժնի ծառայողների կողմից և հանձնվել է ՔԿ Շիրակի մարզային քննչական վարչության քննիչին: Քննիչը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ա.Պետրոսյանի նկատմամբ հայտարարված է եղել հետախուզում և խափանման միջոցը ընտրված է եղել կալանքը, նույն օրը ժամը 21.00-ին որոշում է կայացրել Ա.Պետրոսյանին որպես կալանավոր ոստիկանության Մուշի բաժնի ՁՊՎ ընդունելու մասին:

Ս. Վանեսյանը և Ա. Պետրոսյանը ՁՊՎ են ընդունվել քննիչի կողմից կայացված որոշումների հիման վրա և ՁՊՎ վարչակազմն ղեկավարվել է ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 7-րդ կետի պահանջներով:

Ռ. Սարգսյանը ոստիկանության Մուշի բաժնի ՁՊՎ է ընդունվել որպես ձերբակալված՝ ձերբակալման արձանագրության հիման վրա:

ՀՀ ոստիկանության շտաբ